

# ԿԿՈՒ

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԹԵՐԹԻԿ



ԹԻՐ 6

ՓԵՏՐՈՒՄ Ա. 2019

## ՏԱՐԻ, ԵՂԱՆԱԿՆԵՐ, ԳԻՇԵՐ ԵՒ ՑԵՐԵԿ

Երկիրը կը դառնայ Արեւուն շուրջ՝ միջին հաշուով 150 միլիոն քիլոմէթր հեռաւորութեամբ ուղեծիրի մը վրայ: Միեւնոյն ատեն Երկիրը կը դառնայ ինքն իր վրայ:

### Օր

Օրը կը համապատասխանէ այն ժամանակին, զոր Երկիրը կ'առնէ դառնալու համար իր առանցքին շուրջ:

Մէկ օրը ճիշդ 24 ժամ չի տեւեր, այլ՝ 23 ժամ եւ 56 վայրկեան:

### Տարի

Տարին կը տեւէ 365 օր եւ 6 ժամ: Այս այն ժամանակն է, որուն ընթացքին Երկիրը կը դառնայ Արեւուն շուրջ:

Սովորական տարին ունի 365 օր: Յաւելեալ 6 ժամերը կը կուտակուին եւ 4 տարին անգամ մը կը յառաջացնեն 366 օրով տարի մը, որ կը կոչուի «Նահանջ Տարի»:



### Եղանակներ

Եղանակները տարուան 4 ստորաբաժանումներն են՝ գարուն, ամառ, աշուն, ձմեռ: Կարգ մը շրջաններու մէջ կան միայն երկու ծայրայեղ եղանակներ՝ ամառ եւ ձմեռ: Երկիրը ինքն իր վրայ դառնալով՝ մէկ տարուան մէջ Արեւուն շրջանը կ'ընէ:

Բայց որովհետեւ իր առանցքը, այսինքն՝ երկու բեւեռները միացնող գիծը թեք է, երկու կիսագունդերը անհաւասար կեպով կը ցուցադրուին Արեւու ճառագայթներուն: 21 Մարտէն մինչեւ 23 Սեպտեմբեր հիւսիսային կիսագունդը, դեպի Արեւ հակած ըլլալուն համար, աւելի ուղղակիօրէն կը ստանայ իր ճառագայթները, ցերեկները կ'երկարկին եւ կը դառնան աւելի տաք: Ասոնք հիւսիսային կիսագունդին գարնան եւ ամառուան եղանակներն են: 23 Սեպտեմբերէն մինչեւ 21 Մարտ՝ նոյն բանը կը պատահի հարաւային կիսագունդին համար:

### Խաւարում

Երկիրը կը դառնայ Արեւուն շուրջ եւ լուսինը կը դառնայ Երկրին շուրջ: Երկիրը Արեւուն միացնող գիծին վրայ, կը խափանէ Արեւուն լոյսը: Այսպիսով կը ստացուի Արեւու խաւարումը, Երկիրը կը մխրճուի 6-էն 8 վայրկեան տեւող խաւարի մը մէջ: Իսկ երբ Երկիրը կը գտնուի Արեւը Լուսինի միացնող գիծին վրայ, իր շուրջը կը ձգէ Լուսինին վրայ: Ասիկա Լուսնի խաւարումն է:

ԹԻՐԸ ՊԱՏՐԱՍՏԵՑ՝ ՈՒՌԱՆ ԿԱՌԵԱՆ-ՏԻՐՊՈՒՔԵԱՆ ՆԿԱՐԱԶԱՐՈՒՄԸ՝ ՈԱՖՅԻ ՔԵՇՈՒՅԵԱՆ



# ԳԻՏԵԼԻՔՆԵՐ... ԳԻՏԵԼԻՔՆԵՐ...

## Ինչո՞ւ պետք է բնութիւնը պահպանել

Աղտոտ եւ անխնամ տեսարան մը դիտելը ինքնին շատ հաճելի բան չէ: Սակայն հիմնականը այն է որ բնութեան պետք ունինք ապրելու համար: Օրուան ընթացքին երբ իրենց սննդանիւթը կը պատրաստեն, բոյսերը օդին մէջ կ'արձակեն կազ մը զոր կը շնչենք եւ որմէ չենք կրնար հրաժարիլ՝ թթուածինը: Անտառները շատ թթուածին կ'արտադրեն: Այդ պատճառով ալ պետք չէ զանոնք ոչնչացնել, անտառահատումով կամ այրելով:

Միւս կողմէ, կարգ մը բոյսեր պաշտպանուած են, որովհետեւ անոնցմէ շատ քիչ մնացած է աշխարհի վրայ: Չանոնք ամենեւին պետք չէ քաղել:

## Վնասակար խոտերը անհա՞մ են

Համի հարց չէ: Վնասակար խոտերը բոյսեր են, որոնց ներկայութիւնը հանդուրժելի չէ պարտեզի մը մէջ: Կը յարձակին թէ՛ բանջարանոցին եւ թէ թաղարներուն վրայ եւ արգելք կ'ըլլան որ ցանուած տունկերը բնականոն կերպով աճին: Օրինակ, պատուտակը ամուր կերպով կը փաթթուի բոյսերու ցօղուններուն: Կարգ մը վնասակար խոտեր վտանգաւոր են, ինչպէս ոսկեկոկոնը, որ թունաւոր է, բայց ուրիշներ ալ, ինչպէս կռաբանջարը, աղցանի մէջ հում կ'ուտուի:



Կրնա՞ս գտնել ելքի ճամբան:



Կրնա՞ս գտնել երկու պատկերներուն միջեւ գոյութիւն ունեցող եօթը տարբերութիւնները:



Քանի՞ հատ թէյաման կը տեսնես պատկերին մէջ:



# ՍՊԻՏԱԿ ԻՇԽԱՆՈՒՅԻՆ Լիւսի Սիւլահեան

Անին եւ Արան քոյր եղբայր են:  
Իրենց տան դիմաց գեղեցիկ լճակ  
մը կայ:

Լճակին եզերքը, թուփերուն մէջ  
բազմաթիւ բաղիկներ բոյն դրած են:  
Խումբ - խումբ, հանդարտօրէն  
կը ծփան ջուրին երեսը: Անոնց գոյնզգոյն  
փետուրները կը փայլին, արեւի առա-  
ջին շողերուն դեմ:

Խումբին մէջ կայ բաղիկ, մը որ բո-  
լորէն տարբեր է:

Աւելի խոշոր է ու ձիւնի պէս ճեր-  
մակ: Վիզը երկար, կտուցը կար-  
միր:

Ան բաղիկ մը չէ: Ան կարապ մըն է  
Երբ Անին եւ Արան լճակին ափը  
կու գան խաղալու, հեռուն կը նկա-  
տեն սպիտակ կարապը: Ան շորորալով  
կը դիմաւորէ գիրենք ու անվախ կը մօ-  
տենայ Անիին:

Անին շատ կը սիրէ սպիտակ կա-

րապը: Ձեռքերը կը բոլորէ վիզին  
շուրջ ու քնքոյշ պաչիկ մը կու տայ  
գլխուն:

- Դո՛ւն իմ սպիտակ իշխանուհիս  
ես, կ'ըսէ գուրգուրանքով: Յետոյ կո-  
րեկի հատիկները կը սփռէ խոտին  
վրայ ու կը փսփսայ.

- Տե՛ս, քեզի համար ճաշ բերի:

Միւս բաղիկները տեսելով որ  
Անին կը կերակրէ սպիտակ կարա-  
պը, շարան շարան կու գան իրենց  
բաժինը ստանալու:

Սպիտակ իշխանուհին նեղուած  
սուր կը ճչայ ու կը փախցնէ գողիկ-  
ները, որոնք շուտով ետ կը դառնան:  
Անին ալ միանալով իր սիրելի Սպի-  
տակ իշխանուհիին կը վռնտէ բա-  
ղիկները:

Սպիտակ իշխանուհիին հան-  
դեպ Անիին ցոյց տուած սերը ան-  
հանգիստ կ'ընէ Արան:

Օր մը, ըստ սովորութեան,  
Անին եւ Արան լճակին ափը  
կու գան խաղալու: Անին կորեկի հա-  
տիկները կը հրամցնէ Սպիտակ  
իշխանուհիին ու միւս բաղիկները  
կը վռնտէ:

Արային համբերութիւնը  
կը հատնի.

- Խեղճ բաղիկներն ալ անօթի  
են,- կ'ըսէ:

- Ինծի համար կարելորդ  
Սպիտակ իշխանուհի՛ս է,-  
կը պատասխանէ Անին:

- Հոգ չե՛ս ըներ, որ միւս  
բաղիկները անօթի կը մնան:

Անին կը սրդողի, շրթունք-  
ները կը սեղմէ: Երկար մտա-  
ծելէ ետք...

- Ի՞նչ կ'ուզես որ ընեմ,-  
կ'ըսէ սրտնեղած:

- Չե՛մ գիտեր, կը պատաս-  
խանէ Արան:

- Կ'ուզե՛ս երթանք մայ-  
րիկին հարցնենք:

- Ո՛չ, այս մեր հարցն է,  
մենք երկուքս լուծում  
մը պետք է գտնենք,-  
կ'ըսէ Արան ու երկար  
ատեն լուռ մնալէ ետք,  
կը բացագանչէ.

- Գտա՛յ, գտա՛յ,  
քալէ՛, քալէ՛:

(շարունակելի)






**ՓՈՐՁԷ՝ ԳԻՏՆԱԼ ՏՐՈՒԱԾ  
ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ ՃԻՇԴ ԵՆ  
ԹԵ ՍԽԱԼ**

- 1.- 24 Օգոստոս 2006-ին Պղատոն կը դադրի պարզ մուրրակ մը ըլլալէ, ան կը վերակոչուի թզուկ մուրրակ: **Ճի՞շդ, թե սխալ**
- 2.- 1450 ինքաները սկսան Անտեան լեռնաշղթայի գագաթին վրայ Մաչու Փիչչուի շինութիւնը: **Ճի՞շդ, թե սխալ**
- 3.- ԶԱ 2 միլիոն տարի առաջ մարդոց նախահայրերը՝ Յոմո էրեքթիսները սկսան գործածել Ափրիկէի մէջ: **Ճի՞շդ, թե սխալ**
- 4.- 6 Օգոստոս 1945-ին Միացեալ Նահանգները հիւլեական ռումբ մը կը նետեն Հիրոշիմայի վրայ, ճափոն: **Ճի՞շդ, թե սխալ**
- 5.- 12 Հոկտեմբեր 1490-ին Քրիստափոր Բոլոմպոսոս նոր աշխարհ կը հասնի ծովուն վրայ վեց ամսուան ճամբորդութենէ ետք: **Ճի՞շդ, թե սխալ**



**ԱՆՅԱՒԱՏԱԼԻ,  
ԲԱՅՑ ԻՐԱՒ...**

- \* Ընգղան ունի 3 սիրտ, 9 ուղեղ եւ կապոյտ արիւն:
- \* Ինտոնեզիոյ մէջ իբրեւ ընտանի կենդանի պահուող կապիկներուն տերերը պետք է ունենան իրենց անասունին յատուկ նկարով անձնաթուղթ մը:
- \* Կրաֆ Փինք ադամանդը հազուագիւտ վարդագոյն ադամանդ մըն է, որ աշխարհի ամենէն արժեքաւոր ադամանդը կը նկատուի: Ան գնուած է 46 միլիոն տոլարի:
- \* Ամեն տարի աշխարհի վրայ տեղի կ'ունենան մօտաւորապէս մէկ միլիոն երկրաշարժ: Սակայն անոնց մէկ մասը այնքան թեթեւ է, որ մենք չենք անդրադառնար:
- \* Սարկաստ ծովը աշխարհի միակ ծովն է, որ ափ չունի: Ան Ատլանտեան ովկիանոսին մէջ 1000 քմ. լայնք եւ 3200 քմ. երկայնք ունեցող տարածք մըն է, որ շրջապատուած է ծովային հոսանքներով: Ան նշանաւոր է հոն գտնուող Սարկասում անունով ջրախոտով եւ օձաձուկով, որ հաւկիթէն կ'ելլէ, հետագային հազարաւոր քիլոմէթրեր կը կտրէ դարձեալ վերադառնալու եւ իր ծննդավայրին մէջ իր կարգին իր հաւկիթները ածելու համար:
- \* Հաթչէփսութեան առաջին հին եգիպտացի կին փառաւոն էր: Ան կը հագուէր այր մարդու նման եւ կը դնէր կեղծ մօրուք մը պաշտօնական արարողութիւններուն ընթացքին:



Պատմութեան ամենամեծ շնորհքը  
 1.- Ճիշդ  
 2.- Ճիշդ  
 3.- Սխալ  
 4.- Ճիշդ  
 5.- Սխալ  
 6.- Սխալ  
 7.- Սխալ  
 8.- Սխալ  
 9.- Սխալ  
 10.- Սխալ

